



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ՝ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԱՉԱՎԱԾ

Յայաստանեայց Առաքելական Եկեղեցին Կիրակի, 12 Ապրիլին տօնեց Քրիստոսի Ս. Յարութեան յիշատակը: Այս առիթով, մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մեջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ ու մեր հաւատացեալ ժողովուրդը »Քրիստոս յարեալ ի մեռելոց« աւետիսով յիշատակեց մահուան վրայ Աստուածորդուոյն յաղթանակը:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ: Իր պատգամին մեջ, Առաջնորդ Մրբազանը փառք տուաւ Աստուծոյ, որ մեր Եկեղեցւոյ զաւակներուն առիթը շնորհած է անգամ մը եւս տօնելու Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնը, միաժամանակ բոլորին աւետելով. «Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրինեալ է յարութիւնն Քրիստոսի»: Ան յիշեցուց, որ Մեծ Պահոց եօթը շաբաթները եղան Վերանորոգութեան շրջան մը, իսկ Աւագ Ծաբաթը եղաւ Աստուածորդուոյն Երկրաւոր կեանքի Վերջին փորձառութիւններն ու Առաքեալներուն հետ անցուցած խորհրդաւոր պահերուն Վերապրումի շրջան մը: Ան նշեց, որ այսօր, կը տօնենք Յիսուսի յաղթական Ս. Յարութիւնը, ու այս առիթով, վեր առաւ Ս. Յարութեան ճշմարտութիւնը հաւատացեալի կեանքին մեջ ու աւելցուց, որ մարդկութեան փրկութեան ի խնդիր խաչը հանուելէ ու մահը ճաշակելէ ետք, յարութիւն առնելով, Յիսուս կեանքի յաղթանակը արձանագրեց, ցոյց տալով, որ մահը վախճան մը չէ հաւատացեալին համար. Ան մեր կեանքերը աստուածահանոյ ընթացքով Վերանորոգելու պատգամը տուաւ մարդկութեան, որպեսզի արժանի ըլլանք յաւիտենական կեանքի:

PRELATE CELEBRATES EASTER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH

On Sunday, April 12th, 2009, the Glorious Resurrection of our Lord was celebrated in all Prelacy churches and parishes with Divine Liturgy. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and

delivered the sermon at St. Mary's Church in Glendale, where thousands of parishioners had come to celebrate this Glorious Feast.

Prior to his sermon the Prelate thanked God for bringing together the children of the Armenian Apostolic faith to celebrate together the Resurrection of our Lord Jesus Christ and proclaim triumphantly, "Christ is risen from the dead, blessed is the Resurrection of Christ". The Prelate noted that seven weeks ago we embarked on a journey of reflection and renewal, and during Holy Week relived the atmosphere that Jesus' disciples and followers lived during the last days of His earthly life, and now we have reached the blessed day when we celebrate His Resurrection and triumph over death, which continues to illuminate our lives today.

The Prelate reminded the faithful that Easter is a time of renewal and revival, a time to rise victorious from the burden of our worries and troubles and triumph over our weaknesses just as He triumphed over death, and urged them to live their lives strengthened by this message of the Resurrection to be worthy of new life and eternal life.